ՍԵԼԱՆԻԿԻ ՄՈՒՍՏԱՖԱ ԷՖԵՆԴԻ

XVI դարի 2-րդ կեսի և XVII դարի առաջին քառորդի թուրք պատմագիր Սելանիկի Մուստաֆա էֆենդիի գրչին է պատկանում թուրքական պատմագրության մեջ հայտնի «Թարիխի Սելանիկի» տարեգրությունը։

Սելանիկին գրի է առել իր ժամանակի դեպքերը և նույնիսկ մասնակցել դրանցից շատերին։ Այդ մասին նա բազմիցս հիշատակում է իր «Պատմության» էջերում։

Սելանիկիի վկայությամբ նա վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ և ճանաչվել որպես պետական կարևոր անձնավորություն։ Այս հանգամանքն ավելի արժեքավոր է դարձնում նրա կողմից գրի առնված օսմանյան պետության այդ դարաշրջանի դեպքերը։

Սելանիկիի «Պատմությունը» արժանահավատ աղբյուր է ծառայել նաև ժամանակակից թուրք պատմագիրների համար։ Այդ մասին վկայում են Ի. Հ. Ուզունչարշըլը՝ իր «Օսմանյան պատմության» մեջ և Ի. Հ. Դանիշմենդը իր քառահատոր «Օսմանյան պատմության բացատրական խրոնոլոգիա»-ում*։

Մինչև հիմա հրատարակվել է այդ արժեքավոր աշխատության միայն առաջին մասը։ Այն տպագրվել է մոտ հարյուր տարի սրանից առաջ։ Այդ մասին հրատարակիչ Լութֆին դրքի վերջում ծանոթության ձևով գրում է.

«Սրանից [այսինքն՝ հիջրեթի 1000 թվականից] հետո տեղի ունեցած դեպքերը Նայիմայի «Պատմության»** մեջ գրի առնված լինելու պատճառով՝ այդ դեպքերի տպագրությունը անհրաժեշտ չհամարվեց»։

Թեև հրատարակիչը չի նշում, բայց հավանական է, որ հիջրեթի 1000 (1591—1592) թվականից հետո օսմանյան պատմությանը վերաբերող դեպքերը պատմագիր-տարեգիր Նայիման վերցրել է Սելանիկիից և այդ պատճառով էլ հրատարակիչը անհրաժեշտ չի համարել տպագրել հիշյալ մասը։

Սելանիկիի պատմությունը հրատարակվել է Ստամբուլում 1281 (1864—1865) թվականին։

---

* Ismail Hakkı Uzunçarsılı. Osmanli Tarihi, 4 cilt, Ankara, 1949. Ismail Hami Danismend, Izahli Osmanli Tarihi kronolojisi, 4 cilt, Istanbul, 1950.

** Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատոր Ա, էջ 63—115։